

# Զանգասկ



1

« Ունիսոն »  
հասարակական  
կազմակերպության տեղեկագիր  
2005թ. օգոստոս



Ինչպես հայտնի է, Հայաստանն էլ այլ երկրների նման հաշմանդամության հիմնախնդիրների վերաբերյալ ունի իր ուրույն պատմությունը: Ցավալի է, բայց մինչ այժմ ժողովրդի ինքնագիտակցության մեջ արմատացած է այն կարծիքը, թե հաշմանդամը հասարակության մի պրոբլեմատիկ անդամ է, որը ինքնուրույն և անկախ կյանք չի կարող վարել ոչ մի բնագավառում, ունի միայն խղճահարության և բարեկամների խնամքի կարիք:

Հայաստանյան հասարակության կողմից հաշմանդամը դիտվում է որպես օգնության պասիվ ռեցիպիենտ՝ և ոչ որպես ակտիվ անդամ: Այս ամենից ելնելով, «Ունիսոն» ՀԿ-ն Ամերիկյան դեսպանատան աջակցությամբ իրականացնում է մի նոր նախագիծ, որի կարգախոսն է՝ «Հաշմանդամությունը հասարակության անկատար լինելու հետևանքն է: Նրանից կարելի է խուսափել միայն փոխելով հասարակությունը»:

Նախագիծը հիմնվում է մեզանում մի նոր հայեցակետի վրա, այն է՝ միայն անբարենպաստ միջավայրն է ֆիզիկական սահմանափակումը դարձնում անկարողություն՝ հաշմանդամություն:

Նախագիծն ունի հստակ նպատակ՝ կոտրել հասարակական ստերեոտիպերը և նպաստել մատչելի միջավայրի ստեղծմանը Հայաստանում: Նպատակին հասնելու համար «Ունիսոն» ՀԿ-ն նախաձեռնում է ծավալուն և ինտենսիվ քարոզարշավ, որի շրջանակներում կանցկացվեն մի շարք միջոցառումներ:

Կթողարկվի 300 լազերային տեսաերիզ, որտեղ արևմտյան հասարակության պայմաններում ապրող հաշմանդամների կյանքից, համեմատական կարգով, կներկայացվի դրական բովանդակությամբ մի քանի դրվագ: Ի հակադրություն վերջիններիս, կցուցադրվեն նաև բացասական զգացումներ

առաջացնող էջեր Հայաստանում բնակվող հաշմանդամների կյանքից: Սկավառակը կտարածվի Ազգային ժողովի պատգամավորների, կառավարության անդամների, թաղապետարանների աշխատակիցների շրջանակներում:

Կիրատարակվի նաև գունավոր պաստառ, որի հիմնական բովանդակությունը նույնպես կարտահայտի հաշմանդամների և ոչ հաշմանդամների հնարավորությունների և իրավունքների հավասարության գաղափարը: Այն կտարածվի հասարակական կազմակերպությունների, ուսումնական հաստատությունների, առևտրի կենտրոնների և կառավարական մարմինների շրջանում: Զգալի մասը կփակցվի մետրոպոլիտենի գնացքների պատերին:

Աշխատանքի ընթացքում «Զանգասկ» խորագրով նախատեսված է տպագրել երեք գունավոր տեղեկագիր (որի առաջին համարը Դուք ընթերցում եք այս պահին), որտեղ կլուսաբանվեն զանազան նորություններ հաշմանդամությանը առնչվող թեմաներով, ինչպիսին են, օրինակ, ֆիզիկական սահմանափակում ունեցող մարդկանց համար ուսումնական հաստատություն հաճախելու, հասարակական փոխադրամիջոցներից օգտվելու հարցերը, բացասական ստերեոտիպերի ստեղծման պատճառները և դրանց հաղթահարման ուղիները և այլն...

Օրագրի շրջանակներում կներկայացվեն վեց տեսահոլովակներ, որոնք կցուցադրվեն Հայաստանի Հանրային հեռուստատեսությամբ: Շարունակելով տեսաերիզների միտքը, այս հոլովակներից երեքում կցուցադրվեն հաշմանդամների կենսագործունեության ձեռքբերումները և հաջողությունները, իսկ մյուս երեքը՝ հակադրվելով նրանց, կներկայացնեն շրջակա միջավայրի անբարենպաստ

կառուցվածքի, կամ հասարակության անբարյացակամ վերաբերմունքի հետևանքով առաջացած անհաջողությունները և պասիվ կացությունը: Այստեղ կկիրառվի մի հետաքրքիր և մեզանում նոր արտահայտչամիջոց՝ տեսահոլովակները հիմնված կլինեն լուսանկարների վրա: Այս միջոցը բազմիցս կիրառվել է արտասահմանյան հեռուստատեսությամբ և բավականին արդյունավետ է հեռուստադիտողի գիտակցության վրա ազդելու առումով:

Կանցկացվի 3 սեմինար, որտեղ նույնպես կարծարծվեն հատուկ կարիքներով մարդկանց համար ուսումնառության և ինֆորմացիայի մատչելիության, ինչպես նաև սեփական շահերի պաշտպանության հարցերը:

Օրագրի ավարտական փուլում կանցկացվի լուսանկարների ցուցահանդես և մամլո ասուլիս: Ցուցահանդեսը կտևի շուրջ մեկ շաբաթ (ամենայն հավանականությամբ՝ ՄԱԿ-ի ցուցասրահում), որի ընթացքում հանդիսատեսի ուշադրությանը կներկայացվի անվանի լուսանկարիչ Գերման Ավազյանի պատրաստած՝ հաշմանդամների շուրջ 50 գեղարվեստական լուսանկար: ՁԼՄ-ների և հասարակայնության լայն շերտերի ուշադրությունը ի սկզբանե անցկացվելիք լուսանկարչական ցուցահանդեսին հրավիրելու նպատակով, մամլո ասուլիսը կանցկացվի ցուցահանդեսի առաջին օրը: Բացի այդ, ասուլիսի ժամանակ կիրապարակվեն նախագծի իրականացման արդյունքները, կմանրամասնվեն հետագա ռազմավարությունը և առաջիկայում ձեռնարկվելիք կոնկրետ քայլերը:



# Մատչելի միջավայր հաշմանդամների համար

Հունիսի 27-ին «Մետրոպոլ» հյուրանոցի նիստերի դահլիճում կայացավ հաշմանդամների համար մատչելի միջավայրի ստեղծման խնդիրների նվիրված կլոր սեղան:

Միջոցառման կազմակերպիչն էր «Ունիսոն» ՀԿ-ն, որը ս.թ. մայիսի 1-ից Համաշխարհային Բանկի և Բաց Հասարակության Ինստիտուտի Օժանդակության Հիմնադրամի Հայկական մասնաճյուղի աջակցությամբ իրականացնում է մի նոր նախագիծ՝ «Մատչելի միջավայր հաշմանդամների համար» խորագրով:

Կլոր սեղանի օրակարգում մատչելիության թեմայի շուրջ քննարկվեցին մի շարք հարցեր, այդ թվում կառավարական, կրթական, մշակութային, առողջապահական և այլ նշանակության հաստատությունների շենքերի կառուցվածքային հարմարավետության խնդիրը: Վերջինիս վերաբերյալ, ծրագրի շրջանակներում անցկացվել էր մոնիտորինգ, որում ընդգրկվել էին հիմնականում Կենտրոն և Արաբկիր համայնքներում գտնվող օբյեկտներ: Այս հետազոտության նախնական տվյալները հետևյալն են՝ 202 ուսումնասիրված շինություններից միայն 47-ն են լիովին մատչելի սայլակավոր հաշմանդամների համար: Եթե հաշվի չառնվեն փողոցի և բակի խոչընդոտները, որոնք հնարավոր է շրջանցել տրանսպորտի միջոցով՝ մատչելիների թվին կարելի է գումարել ևս 13-ը: Մատչելիության խնդիր ունեցող հաստատություններից 88-ի ղեկավարներից 36-ը (պատասխանողների թվի 41%-ը) հայտնել են օբյեկտը մատչելի դարձնելու իրենց պատրաստակամության մասին: Փոփոխությանը պատրաստակամ ղեկավարների կեսը դա խոստացել են անել առավելագույնը մեկ ամիս ժամկետում, մեկ երրորդը՝ մինչև մեկ տարի ժամկետում, իսկ մյուսները անորոշ են պատասխանել ժամկետի մասին հարցադրմանը: Այս արդյունքները, որոնք նախնական են, ներկայացվեցին և քննարկվեցին մասնակիցների շրջանակում: Մոնիտորինգի շահավետ և առավել ներգործուն կողմերից մեկն այն էր, որ մոնիտորների դերում հանդես եկան «Ունիսոն» ՀԿ-ի անդամ չորս սայլակավոր հաշմանդամներ:

Բացի այդ, կլոր սեղանի ժամանակ տեղի ունեցավ ՀՀ-ում ԱՄՆ Պետդեպարտամենտի Հասարակական հարաբերությունների բաժնի աջակցությամբ ստեղծված «Հաշմանդամների տեղեկատվական կենտրոն» ([www.disability.am](http://www.disability.am)) և Ավստրալիայի Օքսֆամի Միջազգային երիտասարդական խորհրդարանի աջակցությամբ ստեղծված «Օրենքներ և իրավունքներ» ([laws.disability.am](http://laws.disability.am)) վեբ-կայքերի շնորհանդեսը: Միջոցառմանը մասնակցեցին Քաղաքաշինության, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունների, Երևանի քաղաքապետարանի ներկայացուցիչներ, ՀՀ Մարդու իրավունքների պաշտպան Լարիսա Ալավերդյանը, հաշմանդամության խնդիրներով զբաղվող ՀԿ-ների և Հայաստանում գործող միջազգային կազմակերպությունների շուրջ 40 ներկայացուցիչներ:

Մտքերի փոխանակման ջերմ մթնոլորտում մասնակիցները առաջարկեցին լրացուցիչ ուշադրություն դարձնել նաև Մարդու հոգու մատչելիության խնդրին, որն էլ հաճախ ոչ պակաս խոչընդոտ է դառնում հաշմանդամի և շրջակա միջավայրի փոխհարաբերության մեջ: Մի հետաքրքիր դրվագ մասնակիցների ուշադրությանը ներկայացրեց մոնիտոր-հետազոտողներից մեկը՝ Հմայակ Մարգարյանը: Երբ մատչելիության աստիճանը որոշելիս նա փորձել է մուտք գործել մի



խանութ, մենեջերը մոտեցավ և սկսեց համոզել, որ նա չմտնի այնտեղ, պատճառաբանելով, թե իր համար այդտեղ ոչ մի «մատչելի» բան չկա (նկատի ունենալով ապրանքների գները):

Հետազոտության արդյունքներով առաջին անգամ Հայաստանում տպագրվելու է Երևանի մատչելիության ուղեցույց: Մնում է հուսալ, որ նման միջոցառումները ի վերջո կկարողանան փոխել հասարակության վերաբերմունքը հաշմանդամների խնդիրներին:

- Լուսանկարներում
- Կլոր սեղանի մասնակիցները՝ Դ.Բաբայանը և Վ.Բարդուղյանը (1) քննարկման ժամանակ (2)
  - Ելույթ է ունենում Հ.Մարգարյանը (3)
  - Հետազոտող Գ.Ստեփանյանը իրականացնում է մատչելիության մոնիտորինգը (4)
  - ՀՀ Մարդու իրավունքների պաշտպան Լարիսա Ալավերդյանը (5)
  - Նորից անհաղթահարելի աստիճաններ... (6)



# Քաղաքացիական հասարակությունը բոլորի իրավունքն է




Պաշտոնական տվյալներով Հայաստանում բնակվում է 118000 հաշմանդամ: Չնայած նրան, որ մեր հանրապետության օրենսդրությունում առկա են որոշ իրավական դրույթներ, որոնք կոչված են ապահովելու հաշմանդամների իրավունքների հավասարությունը և պաշտպանությունը, սակայն առ այսօր հաշմանդամները հասարակության կողմից ամեն քայլափոխի ենթարկվում են եթե ոչ ուղղակի, ապա անուղղակի խտրականության: Այս հարցի լուծման մեջ որոշակի առաջընթացի ակնկալիքով այս տարի «Եվրասիա» հիմնադրամի աջակցությամբ «Ունիտոն» ՀԿ-ն սկսում է մի նոր նախագիծ «Քաղաքացիական հասարակությունը բոլորի իրավունքն է» խորագրով: Առաջադրված խնդիրներն են՝ փոխել Հայաստանի հասարակության մեջ առկա վերաբերմունքը հաշմանդամների նկատմամբ, որը խոչընդոտում է քաղաքացիական հասարակության բնականոն զարգացմանը, հավասարապես պարզաբանել հանրապետությունում գործող կարևոր հաստատությունների, տրանսպորտային միջոցների և մարդկային կենսագործունեության ընթացքն ապահովող այլ ձեռնարկությունների մատչելիության պատկերը հաշմանդամների տեսանկյունից: Այդ կապակցությամբ կկազմվի ուսումնասիրված օբյեկտներում առկա խոչընդոտների վերացմանը ուղղված միջոցառումների ցանկ, որով էլ կայանաավորվի հետագա աշխատանքը: Ծրագրի հիմնական նպատակն է՝ մշակել անարգել միջավայրի մասին օրինագիծ, ներկայացնել այն հորհրդարան ու նպաստել, որպեսզի վերջինս ընդունի այս կարևորագույն նախագիծը: Նախատեսված է, որ օրենքով կսահմանվի նաև գոյություն ունեցող խոչընդոտների վերացմանն ուղղված գործողությունների կարգը և պատասխանատուները:



սայլակ տեղափոխող ծնողներին, որոնք հնարավորություն կստանան փոքր երեխայի հետ միասին հեշտությամբ մուտք գործել տարբեր հասարակական վայրեր:

Ծրագրի շրջանակներում նախատեսված են բազմաթիվ միջոցառումներ՝ կլոր սեղաններ, կոնֆերանս, թեման արծարծող պաստառների, թերթիկների, տեսաիլովակների և հեռուստահաղորդումների թողարկում, հասարակական վայրերի, ձեռնարկությունների և այլ կարգի կազմակերպությունների ֆիզիկական մատչելիության



հետազոտություն և այլն: Այժմ ընթանում է ծրագրի սկզբնական փուլը, որի արդյունքներին կանդրադառնանք «Ձանգակ» տեղեկագրի հաջորդ համարներում:

Լուսանկարներում՝ Հայաստանի բազմաթիվ կրթական և մշակութային օջախները անհարթ-հարելի ամրոց են սայլակավոր հաշմանդամների համար (1, 2) Մեծ Բրիտանիայի և ԱՄՆ-ի օրենքները թույլ չեն տալիս կառուցել հասարակական նշանակության շենքերը (նույնիսկ այլ երկրներում) առանց սայլակ օգտագործող և կոյր մարդկանց կարիքները հաշվի առնելու: Այդ իսկ պատճառով երևանում գտնվող Բրիտանական խորհրդի (3) և Մորակառույց ԱՄՆ դեսպանատան (4, 5, 6) շենքերը լիովին հարմարեցված են ցանկացած տեսակի հաշմանդամություն ունեցող մարդկանց համար:





1



3



2



4

# Անավարտ պատմություն

1994 թվականին 9 տարեկան Ալիկ Խառատյանը հայրենի Աչաջուր գյուղի (Տավուշի մարզ) փողոցներից մեկում արկ գտավ: Մտքով անզամ չանցկացնելով վտանգավորության աստիճանը, երեխան սկսել է սղոցել արկը: Պայթյունի հետևանքով Ալիկը կորցրեց տեսողությունն ու ձախ դաստակը:

Բուժման երկար տարիները չվերադարձրին երեխային տեսողությունը: Ավարտելով Երևանի տեսողության խանգարումներ ունեցող երեխաների համար հատուկ դպրոցը, Ալիկը վերադարձավ Իջևան՝ շարունակելու ուսումը Երևանի պետական-լսարանի Իջևանի մասնաճյուղում:

Թերևս, Ալիկը ուներ «այլընտրանք». վերադառնալ հայրենի գյուղ, որտեղ ապրում է նրա գործազուրկ հայրը և հաշմանդանության 3000-դրամանոց կենսաթոշակով ողորմելի գոյություն քարշ տալ... Ալիկը գերադասեց բուհ ընդունվել:

Համալսարանում պատմությունն ուսանելու համար կույր երիտասարդին անհրաժեշտ է ամեն օր ամբողջ կիսամյակի ընթացքում օգտագործել երեք 90-րոպեանոց ձայներիգ: Կրթաթոշակը

(5000 դրամ) և հաշմանդանության կենսաթոշակը, բնականաբար, բավարար չեն հոսանքի, ջրի, սննդի, հագուստի ծախսերը հոգալու և այսքան անհրաժեշտ ձայներիգները ձեռք բերելու համար:

Օգնության կոչ պարունակող նամակները, որոնք Ալիկը ուղարկել է բարերար օլիգարխներին, անպատասխան մնացին: Թղթակցի հարցին, արդյոք Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ներկայացուցիչները գիտեն Ալիկի մասին, Տավուշի մարզի Սոցիալական բաժնի վարիչը մի քանի վայրկյան համակարգչի ստեղծաշարին չխկացնելուց հետո պատասխանեց, որ Խառատյան Ալիկը ներառված չէ ցուցակներում... Մինչդեռ եղբոր ուղեկցությամբ Ալիկը ամեն առավոտ անցնում է վարիչի պատուհանի մոտով ու գնում է համալսարան: Բազմաթիվ բարեգործական կազմակերպություններ պատրաստ են ցուցաբերել... բարոյական աջակցություն, բայց նյութապես Ալիկին ոչ ոք, բացի Մոնթե Մելքոնյանի հիմնադրամից, չօգնեց:

Այս տարի Ալիկը փոխադրվեց երրորդ կուրս: Սեպտեմբերի 1-ին Երևանի համալսարանի Իջևանի մասնաճյուղում պարապմունքների վերսկսմանը

նվիրված հանդիսավոր արարողության ժամանակ կրկին հնչելու են ուսանողական եղբայրության, Հայրենիքի և հայրենասիրության մասին գեղեցիկ խոսքերը... Եվ նորից ոչ ոք չի նկատի Ալիկին, որը սպասելու է արարողության ավարտին համալսարանի ցանկապատից այն կողմ:

- Լուսանկարներում՝
1. Պարապմունքներից ազատ ժամանակը Ալիկը անցկացնում է Ռուսաստան մեկնած բարեկամի բնակարանում
  2. Ալիկը սպասում է եղբորը՝ Գարիկին, որը պետք է նրան ուղեկցի տուն
  3. Անցյալ տարվա սեպտեմբերի 1-ը: Իջևանի համալսարանի բակում կայացած տոնական հանրահավաքի ժամանակ
  4. Դասախոսությունների ձայնագրման համար անհրաժեշտ ձայներիգների մշտական պակասը խանգարում է Ալիկին պատշաճ կերպով սովորել



## Նախագահների ճակատագրեր որոշողը

Չարլզ Բաֆը (1939-2000) ԱՄՆ-ի ամենաազդեցիկ և ճանաչված փաստաբաններից մեկն էր: Երբ նա քսան տարեկան էր, որպես իրավաբանական ֆակուլտետի լավագույն ուսանող ստացավ դրամաշնորհ Ֆորդի Հիմնադրամից, որը թույլ տվեց նրան ճամփորդել Աֆրիկա՝

դասավանդելու իրավագիտություն Սոմերվիլայի Արթուր Գրայնսի անվան իրավաբանական թղթջուղ: Այնտեղ նա վարակվեց անհայտ մի տրոպիկական վիրուսով: Տարած հիվանդության հետևանքով Բաֆը ստիպված էր ամբողջ կյանք տեղաշարժվել միայն հաշմանդանի սայլակի օգնությամբ: Սակայն այդ փաստը չխոչընդոտեց, որ նա հետզհետե դառնա Կապիտոլյան վերնախնամի նշանավոր ներկայացուցիչ:

Հիշատակենք Բաֆի վարած գործերից միայն մի քանիսը: 1970-ականներին նա նախագահ Ռ.Նիքսոնի գործով հատուկ դատախազ էր: Ինչպես հայտնի է, Ուոթերգեյթյան հետաքննության արդյունքում Նիքսոնը ստիպված էր հրաժարական տալ: Նույն գործի շրջանակներում Բաֆը արդարացրեց Ջ.Ֆորդին իրեն վերագրվող

մեղադրանքներից, ինչը ճանապարհի հարթեց Ֆորդի համար դեպի ԱՄՆ նախագահի պաշտոնը: 1998-99 թվականներին Բաֆը գլխավորեց նախագահ Բ.Բիլնթոնի պաշտպանությունը, որին Կոնգրեսի Ներկայացուցիչների Պալատը իմպիչմենթ էր հայտարարել: Բաֆի կողմից փայլուն իրականացված դատական պաշտպանության շնորհիվ 1999թ. փետրվարի 12-ին Սենատը արդարացրեց Բիլնթոնին...

Մի անգամ «Վաշինգթոն Փոստ» թերթի թղթակիցը հարցրեց Բաֆին, արդյոք սայլակի վրա նստելը չի խանգարում նրան աշխատել: «Իրավաբանությունը նստակյաց մասնագիտություն է», - պատասխանեց Բաֆը:

Այս համարը պատրաստել են՝ Արմեն Ալավերդյանը, Գերման Ավագյանը (լուսանկարները), Լուսինե Մելքունյանը, Գայանե Փայտյանը

This project was funded through a Department of State Public Affairs Section grant, and the opinions, findings and conclusions or recommendations expressed herein are those of the Author(s) and do not necessarily reflect those of the Department of State

Սույն նախագիծը ֆինանսավորվել է ԱՄՆ Պետդեպարտամենտի Հասարակական հարաբերությունների բաժնի կողմից տրամադրված դրամաշնորհի շրջանակներում: Այս հրապարակման մեջ արտահայտված կարծիքները, եզրակացությունները կամ հանձնարարականները հեղինակային են և անպայման չէ, որ արտացոլեն ԱՄՆ Պետդեպարտամենտի տեսակետները: